ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴԻ ԿԵՐՊԱՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՊԱՏՄԱՎԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՏԴ 82.091
DOI 10.56246/18294480-2022.12-27

ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՀԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ամբիոն
Էլփոստ՝ vahanagha@yandex.ru
ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵՐԻ
«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դասավանդող
Էլփոստ՝ sarkisian00@mail.ru

Հոդվածում քննության ենք առել Արշակ Երկրորդի կերպարը նորագույն շրջանի հայ պատմավիպասանության մեջ: Համառոտ անդրադարձ կատարելով մեր ամենադրամատիկ և ողբերգական արքաներից մեկի՝ հայ գրականության մեջ ունեցած կերպավորման առանձնահատկություններին, կարևորել ենք այն հանգամանքը, որ վերջինս պարբերաբար գեղարվեստական նոր շունչ է ստացել՝ կրելով ստեղծման ժամանակի, ժանրի զարգացման օրինաչափությունների և գրողների աշխարհայացքային առանձնահատկությունների ազդեցությունները: Ռաֆֆու արշակյան կերպավորումից հետո Ստեփան Զորյանը, Պերճ Զեյթունցյանը և Լևոն Խեչոյանը կերպավորեցին իրենց ժամանակների պահանջներից ծնված Արշակներին, որոնց յուրահատկությունների բացահայտմանն է նվիրված հոդվածը: Այս գրողներից յուրաքանչյուրը նոր լույսի ներքո պատկերեց արքայի ներքին և արտաքին քաղաքական քայլերը, հզոր ու ինքնուրույն պետություն կառուցելու ճիգերը: Ժամանակի ընթացքում նորանոր գեղարվեստական յուրահատկություններով օժտելով Արշակ Երկրորդի կերպարը՝ գրողներն այն ծառայեցրին ազգային միասնության և սեփական զորությանն ապավինելու գաղափարների բարձրաձայնման համար: Արշակ Երկրորդի կերպարակերտման շարունակական բնույթը հայ գրականության մեջ փաստում է արքայի գահակալման շրջանի գեղարվեստականացման հաջողությունների և նրանով բարձրաձայնվող գաղափարների ու խնդիրների արդիականության մասին:

Բանալի բառեր՝ *Արշակ II, պատմագրություն, կերպար, Արշակավան, նորագույն գրականություն, պատմավեպ, Դրասպամատ, Ս. Զորյան, Պ. Զեյթունցյան, Լ. Խեչոյան:*

Արշակ Երկրորդի կերպարակերտումը ուշագրավ ընթացք ունի հայ պատմավիպասանության մեջ՝ պայմանավորված և՛ ժանրի զարգացման, և՛ գրողների ստեղծագործական նպատակադրումների առանձնահատկություններով: Ռաֆֆին իր «Սամվել» (1886թ.) պատմավեպով, կարելի է ասել, հայտնագործեց Արշակ Երկրորդի դրամատիկ ու ողբերգական կերպարը հայ պատմավիպասանության համար: Պատմավեպի երկրորդ գրքի «Մեկը արևմուտքում, մյուսը արևելքում» ենթագլուխը, պատկերելով հայոց հոգևոր և աշխարհիկ առաջնորդների տառապանքերն ու մտորումները, հիմնավորում է անմիաբանության աղետալի հետևանքների գաղափարը: Պատմավիպասանը, ընդամենը մի քանի էջ հատկացնելով Արշակի անհուշբերդյան տառապանքներին, ստեղծում է արքայի թերևս լավագույն կերպարներից մեկը հայ պատմավիպասանության մեջ: Արշակին խցի պատերն ու Վասակի պատանքն անընդհատ ստիպում էին բախվել սեփական անզորությանն ու լքվածությանը: Բանտարկված արքայի բոլոր մտորումները հանգեցնում էին կայացած չարիքի միևնույն պատճառին՝ անմիաբանությանը: Արշակը Ռաֆֆու պատմավեպում հանդես է գալիս անձնազոհ, լքված ու ողբերգական արքայի կերպարով, որ, անշուշտ, հիմնաքարային նշանակություն ունի Արշակի հետագա կերպավորումների համար:

Նորագույն շրջանի հայ պատմավիպասանության մեջ Արշակ Երկրորդը նորովի կերպավորվեց՝ մարմնավորելով ժամանակի հրատապ հարցերն ու կենսական ճշմարտությունները: 1944 թվականին լույս տեսավ Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպը, որ Արշակին անդրադառնում էր հիմնականում կերպարների՝ մոտ անցյալը ներկայացնող հիշողությունների միջոցով, իսկ 1969 թվականին տպագրվում է «Հայոց բերդը», որ հայ պատմավիպասանություն է բերում Արշակունյաց արքայի՝ իբրև գլխավոր հերոսի կերպավորումը: Արշակի ռաֆֆիական կերպավորմամբ հայ պատմավեպում ամրակայված ազգային անմիաբանության թեման դառնում է Ս. Զորյանի պատմավեպի գաղափարական առանցքը: 1977 թվականին Պերճ Զեյթունցյանը լույս է ընծայում իր «Արշակ Երկրորդ» պատմավեպը, որ կոտրում է ոչ միայն Արշակ արքայի կերպավորման ավանդական պատկերացումները,

այլև հայ պատմավեպի ձևաիմաստային բոլոր կարծրատիպերը: Թվում էր, թե այլևս հնարավոր չէ բազմիցս կերպավորված պատմական անձի հերթական կերպավորմամբ որևէ նշանակալից ու հետաքրքիր խոսք ասել, սակայն 1995 թվականին հրատարակված «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպով Լևոն Խեչոյանը նոր մոտեցում դրսևորեց թե՛ Արշակի կերպարակերտման, թե՛ հայ պատմավեպի զարգացման շրջանակներում:

Արշակ արքայի զորյանական կերպավորման առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես ստեղծման ժամանակաշրջանի թելադրանքով, այնպես էլ գրողական ձեռագրով և դասական պատմավեպին բնորոշ կերպարակերտման հատկանիշներով: Արշակ Երկրորդի կերպավորումը «Հայոց բերդը» պատմավեպում անմիջականորեն կապվում է արքայի նվիրական երազանքի՝ հայոց բերդի կառուցման հետ, որ վեպում Արշակի հոգում սրբացված երազից վերաճում է միասնության, հզորության ու անխոցելի ամրության խորհրդանիշի: Իբրև վերնագիր՝ այն իր մեջ ամփոփում է Արշակի և շատ հայոց արքաների՝ դարերով անկատար մնացած մշտավառ երազը՝ բաղձալի միասնականությամբ երաշխավորվող անխոցելի ամրության տեսիլը: Արշակունյաց արքայի կերպարն ու նրա էությունը կլանած գաղափարը վեպում էջ առ էջ մարմնավորվում և ընթանում են ամբողջական ու կատարյալ դառնալու ուղիով, սակայն և՛ Արշակ արքայի կերպարը, և՛ հայոց բերդը մնում են անավարտ: Երկրորդը դառնում է պատմական ցավոտ ճշմարտությունն ամփոփող մեծարժեք գաղափար:

Զորյանը բազմաթիվ ուղիներով վարպետորեն ցուցադրում ու հիմնավորում է Արշակունյաց արքայի կերպարի ողբերգականության գլխավոր ակունքներից մեկը՝ չհասկացվածությունը: Արքայի նպատակը չեն կարողանում հասկանալ ատելությամբ և վրեժխնդրությամբ լցված նախարարները: Արշակի յուրաքանչյուր քայլի տակ նրանք տեսնում էին միայն թագավորական իշխանության զորացման և իշխանական մյուս ուժերի թուլացման ձգտումներ: Արշակի ծրագրերը անընդունելի և անհասկանալի էին նաև հոգևորականության ու նրա առաջնորդ Ներսես կաթողիկոսի համար, որ փորձում էր իր հերթին իր հոգևոր բերդը կառուցել՝ միաժամանակ բարեգործություններով ամրացնելով իր իշխանության դիրքերը: Թագավորական ու հոգևոր իշխանությունների շահերի աններդաշնակությունը Ներսեսին ևս դրդում էր միայն արքայի սնափառությունը տեսնել Արշակավանի կառուցման մեջ. «…Նա չգիտե՞ միթե, որ հին թագավորները քաղաք կառուցում էին հաջող պատերազմից բերած գերիներով… Իսկ Արշակը,- մտածում էր Ներ-

սեսը,- ի՞նչ է անում Արշակը. չունենալով գերի ստրուկներ, բայց ունենալով մեծ փառասիրություն՝ իզուր թշնամանում էր իր նախարարների հետ»[1]:

Արշակ արքայի ծրագրերի բուն էությունը չէին հասկանում և չէին էլ ուզում հասկանալ հասարակ շինականները, որոնց համար արձակված հրովարտակը պարզապես բարի ու փրկարար քայլ էր, մինչդեռ նրանք չունեին այն գիտակցումը, որ իրականում իրենք պետք է դառնային արքայական իշխանության հենարանը:

Արշակը ոչ միայն չհասկացված արքա էր, այլև հոր՝ Տիրանի կողմից չհասկացված ու քննադատված որդի: «Դառնացած թագազուրկը» Արշակավանի կառուցումը որակում էր սնափառություն և անխոհեմ քայլ. «Արշակավա՜ն... կամենում է Մեծն Տիգրանի նման կառուցել իր Տիգրանակե՞րտը: Այո՞... Մոռանում է սակայն, որ Մեծն Տիգրանն այդ արավ մեծամեծ հաղթանակներից հետո, գերի ստրուկների միջոցով: Իսկ ինքը՞: Ինչ է արել ինքը՝ Արշակը: Ոչինչ: Տակավին ոչի՜նչ... Ի՞նչ հաղթանակներ է շահել: Եվ ոչ մի: Ուրեմն ինչով պիտի կառուցի այդ քաղաքը... Բավական է, եթե նա կարողանա ապահով պահել Հայոց Աշխարհը: Դա կլինի ինքնին մեծ փառք ու պատիվ: Իսկ նա, չարած ոչինչ և ոչինչ, ձգտում է անմահության...» (125): Տիրանի խոսքերը մատնում են գահին կարոտ արքայահոր ու որդուց մոռացված հոր ողբերգական դրությունը, որ հոգեբանորեն պատճառաբանում է թագակիր զավակի քայլերի քարկոծումն ու անխնա մեղադրանքը: Մինչդեռ գրողը հետևողականորեն հիմնավորում է Արշակավանի կառուցման գաղափարի ծնունդը:

Ներքին բերդ՝ ազգային միասնություն և անխորտակ ուժ ունենալու հույսը Արշակին երբեք չի լքում: Նա անգամ ներազգային արյունալի բախումներից հետո զարմանալի լավատեսությամբ մտածում էր վերաշինել ավերված քաղաքը: Արշակի յուրաքանչյուր քայլն ու միտքը պատմավեպում անպայմանորեն որևէ կերպ կապվում են արքայական երազանքին: Նա կարող էր կասկածի տակ առնել ամեն ինչ, բայց ոչ երբեք հայրենի միասնության ու ամրության սրբագույն տեսիլն ու դրան հասնելու ուղիների արդարացիությունը, ուստի սխալները մշտապես փնտրում էր իրենից դուրս: Հայոց բերդի կառուցումը՝ իբրև սուրբ նպատակ, դառնում է խմորվող հանցանքների, այդ թվում՝ Գնելին ճանապարհից հեռացնելու քայլի ինքնաարդարացման հիմքը:

---

[1] Զորյան Ստ., Երկերի ժողովածու 12 հատորով, հատոր յոթերորդ, Հայոց բերդը, Եր., 1982, էջ 267: Այսուհետև երկից հղումները կտանք փակագծերում՝ նշելով միայն էջը:

Սերը ևս Արշակի սրտում ծնվում է՝ ներհյուսված հայոց բերդի երազին: Բոլորի կողմից չհասկացված, քննադատված արքան հանկարծ իր երազանքով հասկանալի ու ընդունելի է դառնում Սյունյաց Անդոք իշխանի դստեր համար: Արշակը սիրահարվում է իբրև արքա՝ իր սիրտ ընդունելով հայոց բերդի գաղափարը սիրող և ընդունող Փառանձեմին: Արքայի հոգին տարվում է Փառանձեմով՝ նրան համեմատության մեջ դնելով Օլիմպիայի հետ. «… Եվ թագավորն ակամա համեմատեց նրան իր Օլիմպիայի հետ, որ միշտ սառն էր, ձիգ ու հանգիստ, իսկ այժմ, թեև հուզված, բայց օտարի պես էր կանգնել իր կողքին: Այնինչ Փառանձեմը թվում էր բռնկված կրակ, աչքերը՝ հրացայտ, մազերը՝ բոց…» (170):

Զորյանը Արշակի խճճվածությունը, մոլորվածությունը հյուսում է հոգեբանական սուր լարվածությունից, որ ծնվում է լարված ժամանակներում գահակալած արքայի հոգում՝ հանուն հայրենյաց փրկության ստիպելով գնալ անոտնակոխ ուղիներով, որ այդպես էլ մնում են անհասկանալի ու անընդունելի շատերի համար: Նա տենդագին լարումով շտապում է լուծել սաղմնավորվող խնդիրները: Սակայն հաճախ կայծը մարելու մոլուցքը բերում էր հրդեհի բռնկման, որի չարագույն դրսևորումները դառնում են Մերուժանին վերացնելու հետքերով գնացող Արշակի գերությունը Անհուշ բերդում և հայոց բերդի հիմնահատակ ավերումը:

Պատմավեպում Արշակ արքային տեսնում ենք հիմնականում ներազգային պայքարի մեջ, իսկ արտաքին վտանգն առավելապես արտացոլվում է ներքին վտանգը՝ անմիաբանությունը հաղթահարելու տենդագին լարմամբ: Երկու գերտերությունների հետ արտաքին հարաբերությունների ներկայացմանն այդքան էլ մեծ տեղ չի տրվում, և դա ամենևին էլ պատահական չէ: Ի տարբերություն Արշակին պատկերող նորագույն շրջանի մյուս պատմավեպերի և զորյանական պատմական եռագրության մյուս երկու գործերի՝ «Հայոց բերդը» պատմավեպի վերնագիրը կնքված չէ արքայի անվամբ, ինչը կնշանակեր տվյալ արքայի գահակալման շրջանի դեպքերի գեղարվեստականացում, կենտրոնացում արքայական կերպարի շուրջ: «Հայոց բերդը» վերնագիրը թույլ է տալիս առավել մեղմ մոտենալ Արշակ արքայի կերպարի անկատարությանը, քանի որ հուշում է հեղինակի՝ երկը գրելու գլխավոր նպատակադրումը՝ կենտրոնանալ հայոց բերդի՝ մեր ազգայի ներքին միասնության ու համախմբման գաղափարի ընդգծման և ամբողջական պատկերման վրա՝ վեպում արտացոլված յուրաքանչյուր տարր ծառայեցնելով դրան: Պատահական չէ, որ վեպի գործողությունները շարունակվում են անգամ հե-

տարշակյան շրջանում: Ի տարբերություն Զեյթունցյանի և Խեչոյանի պատմավեպերի, որոնցում Արշակավանի կառուցման գաղափարը բնութագրում, լրացնում էր Արշակի կերպարը, Զորյանի վեպում կարծես արքայի կերպարն է լրացնում Արշակավանի ու հայոց բերդի գաղափարը՝ ծառայելով նրա ամբողջականացմանը:

Պատմավեպի վերջնամասում կարդում ենք. «Իսկ ի՞նչ եղավ հայոց բերդը: Պարսիկները նահանջի ճանապարհին իրենց ողջ կատաղությունը թափեցին Արշակավանի վրա և ավերեցին այն հիմնահատակ» (541): Արշակի բոլոր ջանքերն ու գաղափարները կլանած ավանը անխնա քանդվում ու ոչնչացվում է թշնամի պարսիկի ձեռքով: Այն, ինչ ամիսներ առաջ չհաջողվեց արքայի դեմ թշնամացած հայերին, իրագործեց արտաքին թշնամին՝ առանց որևէ դժվարության ու խոչընդոտի, քանի որ ներքին թշնամանքից ծնված աղետներն արդեն հարթել էին պարսիկի ճամփան: Որքա՜ն խոսուն է պատմավեպի ամփոփիչ միտքը. «Եվ այդ օրվանից հայոց բերդը մնաց անավարտ» (541): Սա սոսկ վիպական գործողությունների ընթացքն ամփոփող հասարակ միտք չէ, այլ անասելի ցավով, ափսոսանքով ու գուցե քողարկված խուլ զայրույթով ներծծված ողբերգական ճշմարտություն: Հայոց բերդի անավարտությունը անխախտ վկան է մեր ազգային միասնական կամքի, հայրենյաց շահի գիտակցման և թշնամու դեմ համախմբման անավարտության:

Հայաստանին մշտապես վիճակված քաղաքական երկընտրանքը Արշակ Երկրորդը փորձում էր հեռու վանել՝ ստեղծելով երրորդ՝ սեփական ճանապարհը՝ ամենահուսալին ու անհրաժեշտը: Անլուծելի երկընտրանքը նոր՝ երրորդ ճանապարհով լուծելու արշակյան մոտեցումը խորությամբ արտացոլված է Պերճ Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» պատմավեպում: Արշակ Երկրորդի զեյթունցյանական կերպավորումը մեր գրականության մեջ նոր ու ինքնատիպ երևույթ էր՝ դուրս պատմական անձի կերպավորման ավանդական ձևերից: Զեյթունցյանական Արշակը թե՛ գեղարվեստական մեկնաբանության տեսակետից, թե՛ իր ներքին գոյափիլիսոփայության խորհրդով բոլորովին տարբեր է նախորդած մյուս Արշակներից: Պատմավեպի գլխավոր հերոսը հանդես է գալիս հոգեկան բարդ ու հակասական ապրումների մեջ: Նրա կերպարը բացահայտվում է հաճախ ինքնախոստովանության և ինքնավերլուծության տեսքով ներկայացված խոհ-մենախոսությունների, երկխոսությունների, կերպարի արտաքին ու ներքին հակադրման, իհարկե նաև գործողությունների միջոցով: Զեյթունցյանական Արշակի հոգեկան դրաման

բազմաճյուղ է. նրա խոհերում արտացոլվում են արքայի և մարդու, հայի, ծնողի և զավակի մտահոգությունները: Հերոսի ներքին տառապանքի բազմաթիվ ակունքները ոչ թե անջրպետվում են, այլ ներհյուսվում և բացահայտում միմյանց: Արքայի ապրումներից յուրաքանչյուրը բացում է մտորումների մի նոր աշխարհ՝ վերացնելով ժամանակային սահմանները:

Զորյանական հայոց բերդի խորհրդանշած ազգային ինքնուրույնությունն ու միասնականությունը Պ. Զեյթունցյանի պատմավեպում վերաձևվում են իբրև «երրորդ ճանապարհ»: Պատմավեպում Դրաստամատը՝ սենեկապետը՝ արքայի գլխավոր խորհրդատուն, շարունակաբար նրա առջև դնում է անխուսափելի երկընտրանքը. «Իմ պարտքն է միայն հիշեցնել, որ դու պետք է ընտրություն կատարես: Կա՛մ Բյուզանդիա, կա՛մ Պարսկաստան: Կա՛մ հունասեր խմբակցություն, կա՛մ պարսկասեր: Դու քո ուժը չունես, արքա՛»[2]: Սա պատմականորեն մեզ մշտապես հետապնդած քաղաքական ընտրությունն էր արևելքի և արևմուտքի միջև, որ Արշակ արքան որոշում է մի կողմ թողնել՝ կառուցելով իր երրորդ ճանապարհը. «Ես ուզում եմ ի՛մ կողմը լինել: Ինքս ինձ հետ» (146-147): Արշակավանի կառուցումամբ արքան ձգտում էր դնել իր սեփական՝ երրորդ ճանապարհի սկիզբը: Այս խելահեղ մտահղացումը դառնում է Արշակի և ներքին ու արտաքին քաղաքական ուժերի հարաբերությունների բացահայտման հիմքը: Զեյթունցյանական Արշակը քաջ գիտակցում էր Արշակավանի հնարավոր աղետաբերությունը, սակայն այն համարում էր միակ ելքը՝ ազատվելու ոչ միայն արտաքին ուժերի, այլև ներքին՝ նախարարական հովանավորության կախումից. «Ես արշակավանցիներին արտոնություններ կտամ... կազատեմ հարկերից... Չեմ թողնի, որ մեկը մյուսի հաշվին ապրի... Եվ նրանք կսիրեն ինձ... Ատամներով կպաշտպանեն իրենց քաղաքը... Իրենց ազատությունը... Մինչև վերջին շունչը կկռվեն... Էլ ստիպված չեմ լինի սողալու մեկ պարսիկի, մեկ բյուզանդացու առաջ... Եթե վաղը պատերազմ սկսի, էլ զորք չեմ մուրա իմ նախարարներից: Ես իմ սեփական ուժը կունենամ...» (178):

Պ. Զեյթունցյանը Արշակավանի կառուցումը ներկայացնում է իբրև Արշակի գոյության իմաստ, մոլության հասնող սևեռուն գաղափար, գլորված արքայական տարիների արդարացում, գործած մեծ ու փոքր սխալների հիմնավորում և արժևորում: Պատմավեպի ընթացքում Արշակն ինքն իրեն հաճախ

[2] Զեյթունցյան Պ., Ընտիր երկեր 2 հատորով, հատոր երկրորդ, Եր., 1987, էջ 147: Այսուհետև երկից հղումները կտանք փակագծերում՝ նշելով միայն էջը:

կոչում է տասնվեցերորդ Արշակունի, որ զեյթունցյանական կերպարի լավագույն բնորոշումն է: Նա և՛ հերթական Արշակունին էր՝ իշխանությունն ատամներով պահելու ջանքերով ու Արշակունիներին մշտապես ուղեկցող մտահոգություններով, և՛ տասնվեցերորդը, որ առանձնացավ մյուսներից՝ ընտրելով սեփական ճանապարհը կառուցելու դժվարին տարբերակը:

Զեյթունցյանական Արշակը շատ հակասական է՝ կտրուկ իր որոշումներում: Այս կերպարը զգալիորեն տարբերվում է զորյանական և խեչոյանական Արշակներից, որ աչքի էին ընկնում իրենց համբերատարությամբ ու շրջահայացությամբ: Արշակ արքայի ողբերգականությունն ավելի է ընդգծվում սեփական ժողովրդի կողմից չսիրված և չընդունված լինելու գիտակցմամբ. «Չէ՛, իմ ժողովուրդը չսիրեց ինձ: Չսիրե՜ց, չսիրե՜ց: Եվ ո՞վ է ընդհանրապես սիրում արքաներին: Ուզում է լավ լինեն, թե վատ, միևնույն է, սեր չի հասնում նրանց» (296): Արքան դրամա է ապրում իբրև հայ մարդ: Հայրենասեր լինելով՝ Արշակը ցույց է տալիս մեր ազգային կյանքի արատները: Եթե Ս. Զորյանն իր պատմավեպով մեկնում է հայոց բերդի անավարտության պատճառը, ապա Պ. Զեյթունցյանն իր գործում լավագույնս ներկայացնում է մեր երրորդ ճանապարհի՝ ներքին միասնության ու ինքնուրույնության բացակայության պատճառը, պատճառի պատճառը, ազգային անհաջողությունների բուն նախահիմքը՝ այն տեսնելով մեր ազգային բնավորության արատների մեջ: Պ. Զեյթունցյանն իր վեպում չի ճոխացնում ու գունազարդում մեր պատմությունն ու այն կերտողներին, հակառակը՝ բազմիցս տարբեր կերպարների միջոցով բարձրաձայնում է բարոյական հաղթանակներով ազգին սնուցելու, ազգային սնափառություն սերմանելու վտանգավորությունը:

Արքայի ողբերգությունն ավելի է մեծանում ազգայի կյանքի քայքայիչ երևույթների դեմ պայքարելու անզորությունից: Ցասումով բարձրաձայնելով այդ երևույթների դեմ իր քննադատությունը՝ Արշակը հուշում է դրանք վերացնելու անհրաժեշտությունը: Նրա խոհերում սուր քննադատական երանգ են ստանում հայոց անմիաբանությունը, օտարամոլությունը, նյութապաշտությունը:

Արշակունյաց արքան անընդհատ գտնվում է եռակողմ պայքարի մեջ: Նա փորձում է հաղթահարել Գնել-Արշակ-Տիրիթ ներքաղաքական եռանկյունին, որի հեղինակները հայության պարսկասեր և բյուզանդասեր հոսանքներն էին: Հետաքրքիր էր այս եռակողմ հակադրությունը լուծելու ճա-

նապարհին առաջացած նոր եռանկյունին՝ Գնել-Արշակ-Փառանձեմ, որի զարգացումը Պ. Զեյթունցյանը ներկայացնում է յուրովի:

Արշակի սերը Փառանձեմի նկատմամբ կերպարի ամբողջացման գործում կարևոր դեր է խաղում: Փառանձեմն իր բնավորությամբ և գործողություններով դառնում է Արշակի կերպավորման կարևոր բաղկացուցիչը: Զեյթունցյանական Փառանձեմը բավականին տարբեր է զորյանական Փառանձեմից, որի կամային հատկանիշները պատմավեպում աստիճանական զարգացում են ապրում: Զեյթունցյանի Փառանձեմը ի սկզբանե պատկերվում է իր զորեղ կամքով և հանդգնությամբ, որ ամենևին չէին ներդաշնակվում ամուսնու՝ Գնելի բնավորությանը: Վիպական գործողությունների ընթացքում հանդուգն ու սառնասիրտ կնոջ բնավորությունը պարզապես բացվում և արտացոլվում է տարբեր իրավիճակներում: Եթե զորյանական Փառանձեմը Գնելի մահը ողբում է՝ դատապարտելով իր աղետաբեր գեղեցկությունը, ապա զեյթունցյանական Փառանձեմը մեղադրում է իրեն, որ չօգնեց ամուսնուն. «Նրա ողբը ոչ թե սովորական լաց ու կոծ էր, այլ հաշվեհարդար աստծո հետ, հավասարների վեճ» (298): Փառանձեմն իր հանդուգն ու համարձակ էությամբ գերում է արքային:

Պատմավեպի առաջին մասում Արշակ արքան առավել շատ դրսևորվում է ներքին հոգեկան ու ներքաղաքական պայքարում, իսկ երկրորդ մասում լայնորեն պատկերվում է նաև արտաքին քաղաքական եռանկյունին՝ Պարսկաստան-Հայաստան-Բյուզանդիա, որի հաղթահարումն ավելի բարդ էր, քանի որ այն հետաքրքիր գեղարվեստական մտահղացմամբ տեղափոխվում է նաև Արշակի անձնական կյանք: Արշակունյաց արքան դժբախտ էր նաև իբրև հայր, որ ակամա կտակում էր իր որդուն մութ ու դժվարին ապագա: Անգամ արքայի՝ որդու հետ ունեցած հարաբերությունները, նրա մասին խոհերը գրողը ծառայեցնում է կյանքի չգրված օրենքների, վաղուց հաստատված ճշմարտությունների արձանագրմանը: Արշակն իր կեսափորձն ու աշխարհընկալումը հայրական ջերմ սիրով փոխանցում է զավակին՝ առանց թաքցնելու դրա մութ ու գարշելի կողմերը. «Որովհետև, սու՛տ է, աշխարհում չկան առաքինություն և ստորություն, քաջություն ու վախկոտություն, թույլատրելին ու անթույլատրելին, լավն ու վատը, սևն ու սպիտակը, չէ՛, չկան, աշխարհն իր հիմքում երկու պարզ ու թափանցիկ մասերի է բաժանված՝ ուտողների և ուտվողների: Հայրդ ամենադժբախտն է, որդի՛ս, ավելի դժբախտ, քան քո տեսած շինականներից որևէ մեկը, որի ճակատին արդեն վաղուց է գրված, թե ուտվողների խմբին է պատկանում: Եվ գիտես՝ ինչո՞ւ:

Որովհետև հայրդ և՛ ուտող է, և՛ ուտվող է միաժամանակ: Պատկերացնու՞մ ես ավելի ստոր և ողբերգական վիճակ: Իսկ դու պիտի ուտող լինես, սու՜ր ատամներով, երկա՜ր մագիլներով» (371): Հայրը որդուն ծանոթացնում է գահակալի համար անխուսափելի իրականությանը՝ դավադրություն, քծնանք, մենակություն, դաժանություն:

Արշակավանի կործանման ժամանակ Գնելի առաջարկը Արշակին՝ փառավոր վախճանը, արքան փոխարինում է ճիշտ պահին հեռանալու որոշմամբ: Ի տարբերություն զորյանական Արշակի, որը, խճճվելով իր իսկ ստեղծածում, հավատում է Շապուհի դավին և գնում ընդառաջ հրավերին՝ Մերուժանից վրեժ լուծելու, ապա զեյթունցյանական Արշակը, որ ամեն ինչ քաջ գիտակցում էր, հեռանում է ճիշտ պահին՝ իր արքայական դերն ավարտված համարելով:

Նորագույն շրջանի հայ պատմավիպասանության մեջ Արշակ Երկրորդին ու նրա գահակալման շրջանին գեղարվեստական նոր շունչ տվեց Լևոն Խեչոյանը՝ իր «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպով: Արցախյան շարժման օրերին գրողը զգում էր նոր առասպելի ստեղծման պահանջը: Խորհրդային կայսրության փլուզման անխուսափելությունը առաջադրում էր երկրի վաղվա օրվա հարցը: Պատերազմական օրերին գրված ստեղծագործությունը կամրջեց անցյալն ու ապագան՝ կոտրելով պատմության ընկալման կարծրատիպերը: Գրողը ստեղծեց պատմական և ժամանակակից վեպերի յուրօրինակ համադրություն, որ ոչ թե սահմանափակվում էր պատմական անցքերի արձանագրմամբ, այլ բնորոշվում դրանց միֆականացմամբ: Լ. Խեչոյանը մեր պատմության վերաբերյալ ունի ուշագրավ դիտարկում. «Մեր պատմական անցյալը փակ համակարգ է, ծաղր է, ի՞նչ է, ինչպես մի ճահիճ, որ ամեն դարի հետ հայրենիքիդ, քաղաքիդ, դռանդ շեմի տակ է բացվում, ո՛չ կուլ է տալիս, ո՛չ ազատ է արձակում: Վեճը, ինչպես կար 1-5-րդ, 9-10-րդ դարերում, հարյուրամյակներ կա, մինչև այսօր գալիս է, նրա հետ գալիս է պատմավեպ գրելը: Իմ կարծիքով՝ լրիվ արդարացի, գուցե մյուս ժողովուրդների պատմական անցյալի մեջ վեճ չկա, իրենց պատմությունն ավարտել, ամբողջացրել են, մերը չի ավարտվել, մերը շարունակվում է...»[3]: Պատմական անցյալի նկատմամբ այսպիսի կարծիքն արդեն իսկ հասկանալի է դարձնում պատմավեպ ստեղծելիս գրողի մոտեցումն ու սկզբունքները:

[3] «Սյունյաց երկիր», Եր., 2006, N 1(92), էջ 64:

«Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վեպը և՛ գեղարվեստական, և՛ գաղափարական առումներով տարբերվում է նախորդ շրջանի պատմավեպերից: Գրողն ավելի շատ հենվում է պատմավեպի ներքին տարողության վրա, որ հագեցված է փիլիսոփայական և հոգեբանական մեծ խտացումներով: Պատմական անձինք կերպավորվում են հեղինակային նոր ըմբռնումների լույսի ներքո: Այս ամենն ապահովում է Արշակ արքայի խեչոյանական կերպարի ստեղծումը յուրատեսակ միջոցներով ու գաղափարներով: «Ողբերգական ժամանակի զգացողությունը հեղինակին մղում է հայրենիքի ու հայրենական իշխանությունը կրողի նույնականացմանը,- գրում է Կ. Գաբրիելյանը,- ուստի նա վեպում Արշակին ներկայացնում է իբրև ազգային ժառանգության իշխանության ժառանգական կրողի»[4]:

«Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» վերնագրով Լ. Խեչոյանն ընդգծում է արքայի և ներքինու առանցքային դերերն ու նշանակությունը վեպում: Նրանց կերպարները հնի և նորի ներհյուսման գեղարվեստական արտահայտությունն են: Արշակը բազմիցս էր դարձել հայ պատմավեպի գլխավոր հերոս, սակայն ներքինին առաջին անգամ է նման դերում: Փավստոս Բուզանդի պատմության մեջ մի քանի նախադասությամբ ավանդված Դրաստամատն ընդգծվում է, բերվում առաջին պլան և վիպական հյուսվածքի մեջ կանխորոշում թե՛ Արշակի, թե՛ մյուս կերպարների մեկնաբանությունը: Նա մարմնավորում է արքայական իշխանության նկատմամբ անմնացորդ հավատարմությունը և այն ամեն գնով պաշտպանող ուժը: Դրաստամատի հավատարմությունը, դառնալով Արշակի մենության ու մերժվածության հակակշիռը, չի կարողանում կասեցնել արքայի կործանումը, քանի որ վերջինս միայնակ էր իր համոզմունքներում ու ծրագրերում, օտարված էր իր իսկ թագավորությունից: Արշակի կերպարը Լ. Խեչոյանը չի իդեալականացնում: Ավելին՝ Արշակունյաց արքայի կերպարը շատ դեպքերում ավելի քան բացասականացված է: «Ընդ որում՝ թագավորի մեջ հակաթագավորին շեշտելու մտայնությունը դիպաշարային մասով գալիս է Խորենացուց ու Բուզանդից, իսկ պատմափիլիսոփայական մասով՝ պատմության դիպաշարի կրկնելիությունից և այսօրվա անդրադարձներից»[5]:

---

[4] Գաբրիելյան Կ., «Լևոն Խեչոյանի ստեղծագործության գեղագիտական առանձնահատկությունները» (թեկնածուական ատենախոսություն), Եր., 2011, էջ 52:
[5] https://granish.org/seyran-grigoryan-where-is-the-king/:

Վեպի սկզբնամասում պատկերելով Դրաստամատի ներքինիացման հեթանոսական արարողությունը՝ Խեչոյանն ընդգծում է վերջինիս կյանքի միակողմանիացումը, որ արտահայտվում էր բացառապես հայոց արքային անմնացորդ ծառայելու առաքելությամբ: Ճիշտ այդպես էլ Արշակի կյանքն է միակողմանի դառնում թագակիր դառնալուց հետո՝ դատապարտվելով ծառայելու միայն թագավորության կայացմանն ու հզորացմանը: Թե՛ Արշակ արքան, թե՛ Դրաստամատ ներքինին անմնացորդ նվիրվում են ակամա ստանձնած միակ առաքելությանը, իսկ երբ գալիս է դրա իրագործման անհնարինության գիտակցումը, միակ հանգուցալուծումը դառնում է մահը:

Խեչոյանական Արշակը արքայի նախորդ կերպավորումների համեմատ առավել քչախոս է: Լ. Խեչոյանը Պ. Զեյթունցյանի պես ընթերցողին չի շռայլում արքայի բարոյախոսական մտորումներն ու ապրումները, իսկ մենախոսություններ գրեթե չկան: Արքայի խեչոյանական կերպավորումն ամբողջականությամբ ընկալելու հարցում պակաս դեր չունեն թվացյալ մանրուքները, հերոսի՝ առաջին հայացքից աննշան ու անհասկանալի թվացող խոսքերը և գործողությունները: Աշտիշատի ժողովի մանրամասնություններին տեղեկանալով և հոգևորականության՝ ի դեմս Ներսեսի, հզոր աստվածապետական երկիր ստեղծելու միտումը հասկանալով՝ արքան միայն ասում է. «Անձրև է գալու»[6]: Հասկանալի է, որ խոսքը մեծ աղետի՝ ներքաղաքական պառակտման և դիրքային պայքարի մասին է: Արշակը թագավորեց մի պետության, որ դեռևս կայացման ու կառուցման կենսական պահանջ ուներ: Երբ Ներսեսին կաթողիկոս դառնալու հրաման է տրվում, իսկ վերջինս փորձում է հրաժարվել, արքան հիմնավորում է իր պահանջը՝ ձևակերպելով իր ողջ գործունեության համար բնութագրական միտքը. «Արիացի՛ր, մենք երկիր ունենք կառուցելու» (101):

Արշակ արքան պայքարում էր ոչ միայն ամուր դիրքերի, այլև հեղինակության համար, որ անընդհատ փորձում էին վարկաբեկել: Ժողովրդի կողմից գրեթե աստվածացվող Ներսեսի համեմատ իր ջանքերն ու զոհաբերությունները գնահատող չկար: Նրա՝ ամուր պետականություն ստեղծելու հսկայական ջանքերը մշտապես արժանանում էին քաղաքական հակառակորդների քննադատությանը. Արշակի՝ «մենք երկիր ունենք կառուցելու»

[6] Խեչոյան Լ., Երրորդ որդին: Պատմվածքներ: Արշակ արքա, Դրաստամատ ներքինի: Վեպ, Եր., 2002, էջ 99: Այսուհետև երկից հղումները կտանք փակագծերում՝ նշելով միայն էջը:

ուղենիշը, ստիպում էր գնալ ցանկացած քայլի՝ հաճախ դեմ գնալով սեփական անձին: Արքան դաժան ծեծի է ենթարկում հորը՝ իմանալով նրա՝ գահակռվին ակտիվ մասնակցություն ունենալու մասին: Ինքն իրեն դեմ գնալու պարտադրանքը, դրա բերած ցավն ու ողբերգականությունը Լ. Խեչոյանը ամփոփում է մի քանի բառով. «Նրա մատների ծալվող խաղերի վրա Արշակը հարվածներից նոր լավացող վերքերի կապտուկներն է տեսել ու ատամնաթափ բերանի ժպիտը, կծկվել է Արշակ թագավորը՝ մեջքը կլորացել, սապատվել է» (143): Սա արդեն իսկ ներքին ահավոր տառապանքի արտաքին դրսևորման ձևն է: Արքայի մեջքի կուզության՝ խեղճացման ու տառապանքի նշան լինելու մասին խոսում է դայակը՝ նրան ներկայացնելով Օլիմպիային. «Նրա մեջքը կուզ չէ, ուշադիր եղիր ու կտեսնես, որ միայնականության պահին է, երբ միայնակ է մնում, այդ ժամանակ է ինքն իր մեջ խորասուզվում, ինքն իրեն կուլ գնում, ու մեջքը կլորանում է մյուս մարդուն էլ տեղ տալու համար» (198-199): Ինչպես տեսնում ենք, խեչոյանական Արշակի տառապանքը քողարկված է ենթատեքստային հուշումներում ու անուղղակիորեն տրված նկարագրություններում:

Արշակ արքան գիտեր դրված նպատակին հասնելու միջոցները. «Ճանապարհը զենքն է ու ոսկին, ելքը՝ միաբանությունը» (140): Հայոց մեջ արդեն կար միջդասակարգային և ներդասակարգային անհանդուրժողականություն ու անմիաբանություն՝ հունամետություն ու պարսկամետություն: Գնելի և Տիրիթի ազատ արձակումը, ապա Արշակավանի կառուցումը պարզապես ներքին երկպառակտման ծավալման հարցում առիթի դեր ունեին: Արքան զգում էր, որ ամուր պետության կայացման համար արվող բոլոր քայլերը անմիաբանության ու օտարամետ հակումների պայմաններում դատապարտված են տապալման. «Բոլորին պիտի հորդորենք, որ ժողովուրդ-պետություն դառնալու համար հույսներս չպիտի դնենք դավանակից կամ որևէ ուժի վրա, մենք պետք է կարողանանք մեր պատերազմը ինքներս մղել» (167):

Արշակ արքային կերպավորած մյուս պատմավեպերից Լ. Խեչոյանի վեպը տարբերվում է նաև Արշակավանի կառուցման գաղափարին առանցքային դեր չհատկացնելով: Արքայական հզոր նստավայրի կառուցումն առավելապես միտված էր իշխանական կորսված դիրքերի վերականգնմանը, չէր կարող հակազդել ներքին ու արտաքին ոտնձգումներին: Ապստամբ նախարարների կողմից քաղաքի ավերումը դրա տրամաբանական հետևանքն էր: Խեչոյանական Արշակը քաղաքի կառուցման գաղափարը նո-

ռովի է մեկնում՝ առաջին հերթին այն հիմնավորելով տնտեսական, ռազմաքաղաքական, նաև հոգեբանական դիտակետերից: Արշակավանի կառուցումն ամրապնդելու էր թագավորական իշխանության դիրքերը, միաժամանակ ունենալու էր տնտեսական, ռազմաքաղաքական մեծ նշանակություն. «Փոխվում են պատերազմելու կանոնները, ու ես հաստատապես համոզված եմ, որ մենք, ինչպես մեր երկրի հարավում, այնպես էլ արևելքն ու արևմուտքը կապող տարածքում, պատերազմական օրերի համար պիտի ունենանք մեր հզոր հենակետը, իսկ խաղաղության ժամանակ այդ հենարանը նաև պիտի կարողանա պատերազմ վարելու չափ նշանակալից լինել երկրի տնտեսությունը ստեղծելու գործում» (203): Դա Արշակի համար «քայքայված, իր դեմքը կորցրած ու կողոպտված թագավորությունը վերականգնելու» հրատապ քայլ էր:

Խեչոյանական Արշակը անձնական կյանքի ցանկացած սահմանափակման գնում է հոժարակամ՝ քաջ գիտակցելով դրա անհրաժեշտությունը. «Իմ Պապ որդուն պատանդ եմ ուղարկում կայսեր դուռը: Ու կին եմ ուզում հռոմեական արքունի տոհմից՝ Օլիմպիային» (188): Ի տարբերություն զեյթունցյանական Արշակի, որը, մեծագույն տառապանք ու ցավ ապրելով, իր դիրքն անիծելով, ստիպված համակերպվում է նաև անձնական կյանքի սահմանափակմանը, խեչոյանական Արշակը այդ զոհաբերմանը գնում է սեփական ցանկությամբ, ինչը դրված նպատակին անպայմանորեն հասնելու երկաթյա կամքի արտահայտությունն էր:

Լ. Խեչոյանի կողմից հետաքրքիր մոտեցում էր Արշակ-Փառանձեմ հարաբերությունների ուրույն գեղարվեստականացումը: Ի տարբերություն Արշակին և նրա գահակալման շրջանին անդրադարձած մյուս պատմավիպասանների՝ Լ. Խեչոյանը Փառանձեմին շատ փոքր տեղ է հատկացրել իր վեպում: Ողջ պատմավեպը Արշակի ջանքերի ու դրանց ապարդյունության դատապարտվածության պատկերումն է լարված ու դժվարին ժամանակներում, ու քանի որ արքայի կյանքը դարձել էր անխուսափելիորեն միակողմանի, սերն այնտեղ տեղ չէր կարող ունենալ: Ամեն ինչ ներկայացվում է քաղաքական ու տնտեսական սառը հաշվարկների տեսքով:

Լ. Խեչոյանի մեկնությամբ Գնելին սպանելուց հետո Փառանձեմի հետ ամուսնությունը Արշակի համար դառնում է տրամաբանական ու պարտադիր թե՛ հունամետ նախարարների զայրույթի դեմ Անդովկ Սյունու հզոր հովանավորությունն առնելու, թե՛ Գնելին անցած արքունապատկան տարածքները օտար ձեռքի չհանձնելու նպատակով: Լ. Խեչոյանը Արշակի և Փա-

ռանձեմի կապը սեր չի որակում, այլ հանգամանքների անխուսափելի պարտադրանք, որին պետք էր ենթարկվել՝ արհամարհելով անձնական երջանկությունը: Այնուամենայնիվ, Փառանձեմի ոչ ամբողջական կերպավորումը տրվում է ողբերգական շեշտադրմամբ: Ներսեսը հրաժարվում է օրինականացնել նրանց ամուսնությունը: Օգտվելով կայսեր մահվանից՝ Փառանձեմը Մրջյունիկ քահանայի միջոցով թունավորում է Օլիմպիային, ապա ամուսնու կողմից աքսորվում է Արտագերս:

Պ. Զեյթունցյանն ու Լ. Խեչոյանը նախընտրում են Արշակի կարևոր գաղափարներն ու մտորումներն արտահայտել որդու՝ Պապի հետ ունեցած զրույցներում, որոնցում Արշակն ամենաանկեղծն ու անմիջականն է: Թագակիր հայրը թագաժառանգ որդուն բացատրում է արքայական թագին կառչելու և այն արժանապատվորեն կրելու կարևորությունը. «Թագը ժողովուրդ է, ժողովուրդը՝ հող, հողը՝ թագավոր: Իսկ լավ թագավորը՝ ժողովրդի արժանապատվություն» (228):

Արշակի ողբերգանակության տպավորիչ դրսևորումներից էին Շապուհի հրովարտակը ստանալուց հետո ունեցած ապրումները, սակայն դրանք ոչ թե հեռանալու և երկիրը թողնելու վախը կամ ցավն էին արտահայտում, այլ մենակ և լքված մնալու դատապարտվածությունը, որ նա զգաց նախարարների խոսքերի և վերաբերմունքի մեջ: Թե՛ արքան, թե՛ նախարարները հիանալի հասկանում էին պարսից հրավերի տակ թաքնված դավը: Եթե զորյանական Արշակը, տարված իր հայոցբերդյան երազով, վստահորեն գնում է Շապուհի հրավերի հետքերով, զեյթունցյանական Արշակը գնում է պարսից արքայի մոտ «ճիշտ ժամանակին հեռանալու» բարոյահոգեբանական մեկնությամբ, ապա խեչոյանական Արշակը հեռանում է՝ հասկանալով իր հետագա քայլերի ապարդյունությունը, զգալով մերժված ու չսիրված լինելու ցավը. «Թագավորը նրանց լավ գիտեր, նախարարներն էլ՝ թագավորին: Թագավորն ասել էր. «Գնա՞մ»: Ասել էին՝ գնա: Ասել էր. «Իմ Վասակ զորավարին ու Դրաստամատին վերցնեմ ու գնա՞մ»» (311): Արքայի հարցի տակ թաքնված էր իր դերի անհրաժեշտության հստակեցումը: Նրա գործողությունները միշտ քննադատող կամ անտարբեր ձևացող նախարարները սիրով իրենց պատրաստակամությունն են հայտնում հոգատար լինելու արքայի ընթացքին ու նրան ուղեկցելու գործում:

Պատմական փաստերից շեղվելով՝ Լ. Խեչոյանը Արշակի մահվան այլ մեկնաբանություն է տալիս: Արքան մեռնում է Դրաստամատի ձեռքով: Միշտ հավատարիմ ու հնազանդ ներքինին վերջին անգամ կատարելով տիրոջ

կամքը՝ նրան արժանապատիվ վախճան է ընծայում: Այդօրինակ մահով Արշակ արքան փաստացի մտնում է հիշվողների դասի մեջ՝ մնալով իշխանության հավերժ կրող:

THE IMAGE OF ARSHAK II IN MODERN ARMENIAN HISTORICAL FICTION

AGHABABYAN VAHAN
Candidate of Philology, Associate Professor,
Chair of Armenian Language and Literature of YSU Ijevan Branch
e-mail: vahanagha@yandex.ru
SARGSYAN MARY
Teacher of «Mkhitar Sebastatsi» Educational Complex
e-mail: sarkisian00@mail.ru

In the article, we examined the image of Arshak II in modern Armenian historical fiction. Briefly referring to the peculiarities of the characterization of one of our most dramatic and tragic kings in Armenian literature, we have emphasized the fact that the latter has regularly received a new artistic breath, bearing the influences of the time of creation, the patterns of genre development and the worldview of writers. After Raffi Arshak's portrayal, Stepan Zoryan, Perch Zeytuntsyan and Levon Khechoyan portrayed Arshak, born of the demands of their time, whose article is dedicated to revealing their peculiarities. Each of these writers portrayed in a new light the king's domestic and foreign policy steps, his efforts to build a strong and independent state. Over time, endowing the image of Arshak II with new artistic features, the writers used it to voice the ideas of national unity, to rely on their own power. The continuous nature of the portrayal of Arshak II in Armenian literature proves the success of the artistic period of the king's reign, the urgency of the ideas and problems raised by him.

Keywords: *Arshak II, historiography, image, Arshakavan, modern literature, historical novel, Drastamat, S. Zoryan, P. Zeytuntsyan, L. Khechoyan*

ОБРАЗ АРШАКА II В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИЧЕСКОЙ ПРОЗЕ

АГАБАБЯН ВАГАН
Кандидат филологических наук, доцент,
Кафедра армянского языка и литературы Иджеванского филиала ЕГУ
электронная почта:vahanagha@yandex.ru
САРКИСЯН МЭРИ
Преподаватель образовательного комплекса «Мхитар Себастаци»
электронная почта:sarkisian00@mail.ru

В статье мы рассмотрели образ Аршака II в современной армянской исторической прозе. Кратко касаясь особенностей характеристики одного из наших самых драматических и трагических царей в армянской литературе, мы подчеркнули тот факт, что последний регулярно получал новое художественное дыхание, неся на себе влияние времени творчества, закономерности жанрового развития, и мировоззренческие особенности писателей.

После Раффи образ Аршака в соответствии с требованиями своего времени изобразили Степан Зорян, Перч Зейтунцян и Леон Хечоян, раскрытию особенностей которых посвящена данная статья.

Каждый из этих писателей по-новому изображал внешнеполитические шаги царя, его усилия по построению сильного и независимого государства.

Со временем, наделяя образ Аршака II новыми художественными чертами, писатели использовали его для озвучивания идей национального единства, для опоры на собственные силы. Постоянство изображения образа Аршака II в армянской литературе свидетельствует об успешности беллетризации периода правления царя, актуальности поднятых им идей и проблем.

Ключевые слова: *Аршак II, историография, образ, Аршакаван, современная литература, исторический роман, Драстамат, С. Зорян П. Зейтунцян Л. Хечоян.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 09.02.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 06.02.2022թ.: